600.0389.09.12.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 դեկտեմբերի 2016 թվականի №389Ա

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԻ ՇԱՐՔ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 1-Ի №61Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ա» ենթակետը, 2015 թվականի հունիսի 23-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության №ՀՕ-108Ն օրենքի 28-րդ հոդվածը, և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի նոյեմբերի 3-ի №1207Ա որոշումը և «Ախուրյան-Արաքս-ջրառ» փակ բաժնետիրական ընկերության 2016 թվականի նոյեմբերի 7-ի №194-ԷՍ գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը որոշում է.

1. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝
   1) 2009 թվականի հոկտեմբերի 7-ի «Ախուրյան-Արաքս-ջրառ» փակ բաժնետիրական ընկերությանը ջրային համակարգի օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №637Ա որոշումը,
   2) 2011 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2009 թվականի հոկտեմբերի 7-ի №637Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին» №405Ա որոշումը,
   3) 2014 թվականի օգոստոսի 13-ի «Ախուրյան-Արաքս-ջրառ» փակ բաժնետիրական ընկերության ջրային համակարգի օգտագործման №0013 թույլտվության գործողության ժամկետը երկարաձգելու մասին» №332Ա որոշումը:

2. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2007 թվականի մարտի 1-ի «Սևան-Հրազդանյան-ջրառ», «Ախուրյան-Արաքս-ջրառ», «Դեբեդ-Աղստև-ջրառ», «Որոտան-Արփա-ջրառ» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից ոռոգման ջրի մատակարարման ծառայությունների մատուցման սակագների սահմանման մասին» №61Ա որոշման՝

   1) վերնագրում «, «Ախուրյան-Արաքս-ջրառ», «Դեբեդ-Աղստև-ջրառ», «Որոտան-Արփա-ջրառ» փակ բաժնետիրական ընկերությունների» բառերը փոխարինել «փակ բաժնետիրական ընկերության» բառերով,

   2) 1-ին կետի 2-րդ և 4-րդ ենթակետերն ուժը կորցրած ճանաչել:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
9 դեկտեմբերի 2016թ.